Ծրագրի անվանումը՝ **«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» «11001 Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ»**

Ծրագրի իրականացման տևողությունը /<u>ամողական</u>/ ____ **2026թ. հունվար – հունիս**

Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը ____ **N ՏՄԱԿ 2026-1**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | Համառոտ բովանդակությունը | Գնահատման ցուցանիշներ, չափման միավոր | Ակնկալվող արդյունք և վերջնաժամկետ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տարեկան պլանավորման ցուցանիշը | Պլանավորված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար | Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում | Պլանավորված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.3 - սյ.2) | Տարբերության պատճառը (սյ. 4-ում նշված տարբերության պարզաբանումները) |
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատում | Տարածքային մակարդակի գնահատման ԿՁԱՊԿ գնահատման գործընթացին մասնակցություն, ԿԱՊԿ գնահատման եզրակացության բողոքարկում | ԿՁԱՊԿ գնահատում անցած **երեխաների թիվը**, մարդ և բողոքարկումների թիվը, հատ | 57 | 27 | 26 | -1 | Ուսումնական տարվա ավարտով պայմանավորված՝ ՏՄԱԿ-ները հիմնականում իրականացրել են ԿԱՊԿ գնահատումներ, ինչի արդյունքում ԿՁԱՊԿ գնահատումների թիվը նվազել է 1-ով: |
| | | Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացին մասնակցություն, աջակցություն նոր | ԿԱՊԿ գնահատում անցած **երեխաների թիվը**, մարդ | 55 | 31 | 34 | +3 | Թվի աճը պայմանավորված է 3 երեխայի ԿԱՊԿ գնահատման արձանագրությունների |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գործիքակազմի կիրառման ընթացքում (տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների կարողությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ) | | | | | | մշտադիտարկման անհրաժեշտությամբ: |
| | | ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում գտնվող իրավախախտում կատարած անձանց հոգեբանական կարիքի գնահատում | Գնահատում անցած **անձանց թիվը**, **մարդ** | 36 | 0 | 0 | 0 | |
| 2. | Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրում | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում նախադպրոցական տարիքի ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաներին | Մանկավարժահոգեբանական ծառայություններից օգտվող **երեխաների թիվը**, **մարդ** | 26 | 26 | 26 | 0 | |
| 3. | Բողոքների, ահազանգերի կամ դիմումների հիման վրա դեպքերի ուսումնասիրություն ուսումնական հաստատություններում | Բռնության, բուլինգի, սոցիալապես ոչ ընդունելի վարքային դրսևորումների և խնդրահարույց դեպքերի վերաբերյալ դիմումների ընդունում, դրանց ուսումնասիրություն, փաստերի հավաքագրում և փաստաթղթավորում, ինչպես նաև ուսումնասիրման արդյունքում ստացված տվյալների վերլուծություն և խնդրի համալիր լուծման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացում: | **Դեպքերի թիվը**, **հատ** | 48 | 24 | 80 | +56 | Դեպքերի թվի աճը պայմանավորված է թեժ գծով ստացված ահազանգերի և բողոքների աճով, ինչպես նաև դպրոցներում երեխաների պաշտպանության (ԵՊ) թիմերի ներդրմամբ, հաղորդման և արձագանքման մեխանիզմների ակտիվացմամբ, ինչի արդյունքում բարձրացել է դեպքերի վաղ հայտնաբերման և գրանցման մակարդակը: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ | Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և դպրոցների մասնագետների և մանկավարժների կարողությունների զարգացման/ վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում ՀՀ բոլոր մարզերում սովորողների ԿԱՊԿ գնահատման գործիքակազմի կիրառման, մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման և անհատական ուսուցման պլանի վերաբերյալ | **Վերապատրաստումների թիվը, հատ** | 280 | 150 | 172 | +22 | Թվի աճը պայմանավորված է հոգեբանների գործունեության փաթեթի ներդրումից հետո առաջացած լրացուցիչ վերապատրաստման անհրաժեշտությամբ: |
| | | | **Ուսումնական հաստատությունների թիվը,** որտեղ իրականացվելու են վերապատրաստումներ, հատ | 1228 | 905 | 905 | 0 | |
| | | | **ՏՄԱԿ-ների թիվը,** որտեղ իրականացվելու են վերապատրաստումներ, հատ[1] | 25 | 25 | 25 | 0 | |
| | | | **Վերապատրաստվող անձանց թիվը, մարդ** | 3664 | 2126 | 3445 | +1319 | Մասնակիցների թվի աճը պայմանավորված է ծնողների և մասնագետների իրազեկվածության և հետաքրքրվածության բարձրացմամբ: |
| 5. | Խորհրդատվություն | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, սովորողների | **Խորհրդատվությունների թիվը, հատ** | 2441 | 1246 | **1348** | **+102** | Խորհրդատվությունների թվի աճը պայմանավորված է ֆիզիկական և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ընթացքում արձանագրված կարիքներին արագ արձագանքմամբ: |

[1] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճման կարգով:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ծնողներին խորհրդատվությունների ձևով, ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով | **Ուսումնական հաստատությունների թիվը**, որտեղ իրականացվել են խորհրդատվություններ, հատ | 579 | 298 | **486** | +188 | Թվի աճը պայմանավորված է ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ընթացքում արձանագրված կարիքներին ուղղված խորհրդատվությունների տրամադրմամբ: |
| | | | **ՏՄԱԿ-ների[2] թիվը**, որտեղ իրականացվել են խորհրդատվություններ, հատ | 25 | 25 | 25 | 0 | |
| | | | **Խորհրդատվություններ ստացած անձանց թիվը**, անձ (մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, ՄՀ աջակցության թիմի անդամներ) | 6067 | 3106 | **3687** | **+581** | Թվի աճը պայմանավորված է ուսումնական հաստատությունների ֆիզիկական և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ընթացքում մանկավարժական և վարչական անձնակազմին տրամադրված խորհրդատվությունների քանակով: |

[2] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճման կարգով:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Մշտադիտարկում | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿ գնահատման գործընթացների մշտադիտարկում ՀՀ բոլոր մարզերում: Ամփոփ վիճակագրական տվյալների ներկայացում ըստ մարզերի, սեռատարիքային կազմի, ուսումնական հաստատության, երեխայի կարիքի տեսակի և մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանի՝ օգտվելով ՀՀ ԿԳՄՍՆ ԿՏԱԿ-ի կողմից վարվող տվյալների բազայից | **Մշտադիտարկումների թիվը,** **հատ** | 675 | 340 | **356** | +16 | Թվի աճը պայմանավորված է ֆիզիկական միջավայրի և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ծավալով: |
| | | | **Ուսումնական հաստատությունների թիվը,** որտեղ իրականացվել են մշտադիտարկումներ, հատ | 538 | 269 | **357** | **+88** | Թվի աճը պայմանավորված է ֆիզիկական միջավայրի և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ծավալով: |
| | | | **ՏՄԱԿ-ների[3] թիվը,** որտեղ իրականացվել են մշտադիտարկումներ, հատ | 25 | 25 | 25 | 0 | |
| 7. | Կրթության կազմակերպմանն օժանդակող ուսումնամեթոդական նյութերի բովանդակային մշակում, հրատարակում և փորձաքննություն | Կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրապարակում և ձեռքբերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժների, մասնագետների և ծնողների համար (այդ թվում՝ դիդակտիկ պարագաներ, խաղեր, զարգացնող ու աշխատանքային նյութեր) | Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացին օժանդակելու նպատակով մշակված և հրապարակված **ուսումնական ու մեթոդական գրականության թիվը, հատ** | 24 | 13 | 10 | 0 | |
| | | ՀՄԿ-ի և ՏՄԱԿ-ների կամ ոլորտի այլ կազմակերպությունների | **Փորձաքննությունների թիվը,** **հատ** | 36 | 22 | 38 | 0 | |

[3] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճման կարգով:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մասնագետների կողմից մշակված բովանդակային նյութերի փորձաքննություն | | | | | | |
| 8. | Իրազեկում և փորձի փոխանակում | Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման հետ կապված՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կամ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների հանրայնացում և լուսաբանման ապահովում (կլոր սեղաններ, հանդիպումներ, քննարկումներ, հրապարակումներ) | **Միջոցառումների, իրազեկող գրառումների թիվը, հատ** | 210 | 103 | **104** | +1 | |
| 9. | Հանրակրթական դպրոցների մանկավարժների կարողությունների զարգացում | Ծրագրում ընդգրկված մենթոր-վերապատրաստողների՝ հանրակրթական դպրոցների մանկավարժների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների իրականացում | **Մենթոր-վերապատրաստողների թիվը, մարդ** | | 60 | 69 | +9 | Թվի աճը պայմանավորված է Երևանում ծրագրի ներդրմամբ, նոր մենթորների ավելացմամբ, ինչի հետևանքով տեղի է ունեցել նաև մենթորների դրույքաչափերի վերանայում |
| | | | **Ծրագրին մասնակցած դպրոցների թիվը, հատ** | | 60 | 90 | +30 | Թվի աճը պայմանավորված է Ծրագրի բովանդակային փոփոխությամբ, որի հետևանքով մեկ դրույքաչափով ներգրավված մենթորները մեկ հաստատության փոխարեն երկու հաստատությունում են իրականացնում աշխատանքները նշված |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ժամանակահատվածում |
| | | | **Վերապատրաստված մանկավարժների թիվը, մարդ** | | 1000 | 1813 | +813 | Թվի աճը պայմանավորված է Երևանի դպրոցներում ծրագրի ներդրմամբ և դպրոցների ավելացմամբ |
| 10. | Ծրագրի իրականացման արդյունքների գնահատում և մշտադիտարկում | Ծրագրի ազդեցության և արդյունքների գնահատման նպատակով ծրագրի մշտադիտարկողների կողմից ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների մշտադիտարկում | **Մշտադիտարկողների թիվը, մարդ** | | 7 | 7 | 0 | |
| 11. | Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների համար ներառող դասավանդման վերաբերյալ ձեռնարկի մշակում և հրատարակում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժների և մասնագետների համար արդյունավետ ներառական կրթության կազմակերպման համար նախատեսված ձեռնարկի մշակում և հրապարակում | Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացին օժանդակելու նպատակով մշակված և **հրապարակված ուսումնական ու մեթոդական գրականության թիվը, հատ** | 1 | 0 | 0 | 0 | |

**Կենտրոնի անվանումը՝** **«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ**

**Տնօրեն՝**

**Լ. Մնացականյան**

*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*